ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

__25__հուլիս 2011թ թիվ__54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին>> թիվ 624 որոշումը,

կարգադրում եմ՝

1. Հաստատել ըստ մարզի տարածաշրջանների պլանային ստուգումների հանձնաժողովի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի տարածքում 2011թ. Քաղաքաշինական բնագավառում պլանային ստուգումների ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի.

3. Սահմանված գրաֆիկում իրականացնել մարզի բոլոր համայնքներում քաղաքաշինական բնագավառի պլանային ստուգումներ և արդյունքները ներկայացնել մարզպետին.

4.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Վ.Սարգսյանի վրա.

5.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված թիվ 2
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ.Հուլիսի25-ի
թիվ 54 կարգադրության

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2011թ. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ – Դիլիջան, Հովք, Խաչարձան,Գոշ,Աղավնավանք, Հաղարծին,Թեղուտ, Իջևան, Ազատամուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Ակնաղբյուր, Բերքաբեր,Գանձաքար, Գետահավիտ, Ենոքավան, Լուսաձոր, Դիատավան, Խաշթառակ, Լուսահովիտ, Մարիգյուղ,

ՀՈԿՏԵՄԲԵՐ- Ն.Ծաղկավան, Սնքար, Կիրանց, Աճարկուտ, Վազաշեն, Նոյեմբերյան, Այրում, Արճիս, Բերդավան,Բարեկամավան, Բագրատաշեն, Բաղանիս, Դեբեդավան,Դեղձավան,Դովեղ,Զորական,Լճկաձոր, Կոթի,Կողբ, Հաղթանակ ,Ոսկեպար,Ոսկևան,Պտղավան,Ջուջևան

ՆՈՅԵՄԲԵՐ- Բերդ , Այգեպար, Այգեձոր, Արծվաբերդ,Տավուշ, Իծաքար, Վ.Ծաղկավան, Ն.Կ.Աղբյուր, Վ.Կ.Աղբյուր, Մովսես,Նավուր, Նորաշեն, Չինչին, Չորաթան, Չինարի,Պառավաքար,Վարագավան

Տավուշի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ.Հուլիսի25-ի
թիվ 54 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2011թ. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Դիլիջանի,Իջևանի ,Բերդի, Նոյեմբերյանի տարածաշրջաններ՝

Վ.Սարգսյան - քաղաքաշինության վարչության պետ

Մ.Մելքումյան - քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական խմբի գլխավոր մասնագետ

Մ.Ղալումյան - քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության խմբի գլխավոր մասնագետ

Ա.Սարգսյան - քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Գ.Բաղալյան - քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական խմբի գլխավոր մասնագետ

Ա.Գալստյան - քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության խմբի առաջատար մասնագետ

Ս.Չիբուխչյան - քաղաքաշինության վարչության, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ

Տավուշի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար Ս.ԴԱՎԹՅԱՆ